Առողջապահության ոլորտի հարգելի գործընկերներ

Առողջապահության ազգային ինստիտուտի Համաճարակաբանության և վարակային հիվանդությունների ամբիոնը, ՀՀ ԱՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի (ՀՎԿԱԿ) և ՀՀ ԱՆ Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի (ԻՀԱԿ) հետ համատեղ, հայտարարում են ամառային դպրոց՝ «Վարակաբանությունն ապագայի մասնագիտություն» խորագրով, նախատեսված բժշկական համալսարանների վերջին կուրսի ուսանողների, նորավարտ բժիշկների և մասնագիտացման հարցում դեռևս չկողմնորոշված բժիշկների համար: Դպրոցը կանցկացվի 5 աշխատանքային օրվա ընթացքում:

## Օր 1. ՀՎԿԱԿ-ի ծանոթացում

- ՀՎԿԱԿ-ի բացման դասախոսություն. ՀՎԿԱԿ-ի՝ որպես հանրային առողջապահության պահպանման և բարելավման պատասխանատու կառույցի գործառույթների ներկայացում՝ ըստ վարչությունների, բաժինների և մասնաճյուղերի:
- ՀՎԿԱԿ-ի լաբորատորիաներ այցելություն, ծանոթացում աշխատանքին:

## Օր 2. Հմտություններ վարակաբանության ոլորտում

- Պրակտիկ հմտությունների սեմինար. անձնական պաշտպանիչ միջոցների ճիշտ օգտագործում, նմուշառում, մշակման տեխնիկա:
- Վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման գործառույթներին ծանոթացում համապատասխան վարչություններում՝ շրջայցի միջոցով: Ծանոթացում գործնական համաճարակաբանության գործընթացներին՝ ներառյալ բռնկումների համաճարակաբանական դիտարկում, հետազոտություն, պատճառների ուսումնասիրություն, տվյալների վերլուծություն, կանխարգելիչ միջոցառումների պլանավորում, իրականացում և գնահատում, ինչպես նաև առողջապահության քաղաքականության մշակում:

## Օր 3. Վարակաբանությունը որպես բժշկության ժամանակակից մարտահրավեր

- ԻՀԱԿ-ի բացման դասախոսություն. վարակային հիվանդությունների տարածվածություն, համաշխարհային միտումներ, վարակի վերահսկողության արդի մեթոդներ։
- Շրջայց ԻՀԱԿ-ում (ՄԻԱՎ ամբուլատոր կլինիկա, լաբորատորիա)։
- Կլինիկական դեպքերի քննարկում։

## Օր 4. Ստացիոնար բուժօգնություն

- Համայց ԻՀԱԿ-ի ստացիոնարում՝ ընդունարան, մանկական և մեծահասակների ինֆեկցիոն բաժանմունքներ։
- Մասնակցություն համայցերին։
- Պացիենտների հիվանդության դեպքերի քննարկում (տեսական մաս)։

## Օր 5. Ստացիոնար բուժօգնություն

- Համայց ԻՀԱԿ-ի ստացիոնարում՝ ինֆեկցիոն վերակենդանացման բաժանմունք, ռադիոլոգիայի բաժանմունք։
- Մասնակցություն համայցերին։
- Պացիենտների հիվանդության դեպքերի քննարկում (տեսական մաս)։

## Մասնակցության առավելությունները

- Մասնակցությունն անվճար է։
- Վկայականի շնորհում։
- Ամառային դպրոցի շրջանակում լավագույնս դրսևորած մանակիցները կարժանանան օրդինատուրայի ընդունելության արտոնյալ պայմանների։

## Կազմակերպչական թիմի դասախոսներ

Դասընթացները վարելու են ԻՀԱԿ-ի և ՀՎԿԱԿ-ի փորձառու մասնագետները, արտերկրում վերապատրաստված վարակաբաններ, համաճարակաբաններ և գիտահետազոտության ոլորտի ճանաչված մասնագետներ:

## Լրացուցիչ հնարավորություններ

- Անհատական մենթորների տրամադրում:
- Համալսարանական և մասնագիտական կազմակերպությունների հետ համագործակցություն:
- Մասնագիտական գրականության և նյութերի տրամադրում (առցանց նյութեր, ուղեցույցներ, ընթացակարգեր) :
- Միջազգային գործընկերների հետ համագործակցություն: